ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ VIII, № 8, 1955 Биол. и сельхоз. науки

ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ռ. Վ. Գրիգորյան

ՄԻ ՔԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԽՆՁՈՐԵՆՈՒ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոկտեմբերյանի շրջանը Հայաստանի արդյունաբերական պտղաբուծական շրջաններից մեկն է, որը, Հոկտեմբերյանի ջրանցքի կառուցման հետևանքով ունի պտղաբուծության զարգացման մեծ հեռանկարներ։ Հողերի յուրացման հնարավորությունների կապակցությամբ, Հոկտեմբերյանի շրջանը գտնվում է Արարատյան հարթավայրի արևմտյան մասում, ծովի մակերդակից 840—1110 մ բարձրության վրա, շրջապատված մեծ ու փոքր լեռներով։ Մթնոլորտային տեղումները Արարատյան հարթավայրի պայմաններում չեն կարող ապահովել պտղատու կուլտուրաների անջրդի մշակումը, ուստի այդինները ոռոգվում են արհեստականորեն։

Ջերմաստիճանի տեսակետից Հոկտեմբերյանի շրջանը գտնվում է ավելի նպաստավոր պայմաններում։ Դարունը տաք է, կարճատև և անմիջապես անցնում է ամռան, աշունը տաք է և երկարատև։ Մեծ վտանգ են ներկայացնում ձմռան ընթացքում ջերմաստիճանի խիստ տատանումները և ուշ գարնանային ցրտահարությունները, որոնք հաճախ վնասում են վաղ ծաղկող պտղատու ծառերի ծաղկարողրոջներին և ծաղիկներին։ Աշնանային ցրտահարությունները մեծ մասամբ լինում են մասսայական տերևաթափից հետո։ Պտղաբուծական անտեսությունների համար մեծ նշանակություն ունեն նաև քամիները։ Այստեղ գերակշռում են հյուսիսային և արևելյան քամիները, որոնք մեծ վնաս են հասցնում պտղատու տնկարկներին՝ հատկապես ծաղկման և պտուղների հասունացման շրջանում։

Հոկտեմբերյանի, հատկապես Հայկոնսերվտրեստի սովխոզների հողերն ընկած են Արագածի հրաբխային մասսիվի հարավային լանջի վերջին լեռնաճյուղի վրա։ Ըստ Ա. Ի. Չիթչյանի տվյալների, Հոկտեմբերյանում հիմնականում գերիշխում են՝ մուգ-թուխ կուլտուր ջրովի, զանազան աստիճանի կուլտուրացած, գորշ և թաքիրային (պրիմիտիվ) հողատեսակները։ Այստեղ պայմանները հնդավորների զարգացման համար բավական անբավարար են, քան Արարատյան հարթավայրի որևէ այլ շրջանում։ Այդ իսկ պատճառով մեր ուսումնասիրություններն խնձորենու բիոլոգիայի վերաբերյալ կատարվել են հատկապես Հոկտեմբերյանի շրջանում։ Դիտողությունները տարվել են 1951 թվականից, Հայկոնսերվտրեստի Միկոյանի, Վորոշիլովի և մասամբ էլ Ժդանովի անվան սովխոզներում խնձորենու 25 սորտերի վրա, որոնցից 2-ը տեղական են, 6-ը՝ ռուսական, իսկ 17-ը՝ արտասահմանյան։*

Ծառերը հիմնականում տնկվել են 1932—1936 թթ. 10×10 մ հեռավո-

* *Ա. Ի. Չիթչյան*, Почвы плодовых совхозов Армконсервтреста и их освоение. Ереван, 1938.

բության վրա։ Միկոյանի անվան սովխոզում խնձորենու տնկարկները մեծ մասամբ գտնվում են Սևավ-Մաստարայի հարուստ հողերի վրա։ Վորոշիլովի և Փղանովի անվան սովխոզներում խնձորենու համար ընտրված են միջնադարյան անհամապատասխան հողեր (թաքիրային կամ ավազային), այդ պատճառով էլ ծառերի 30%-ից ավելին դուրս են եկել շարքից։ Հայտնի է, որ խնձորենին հողի նկատմամբ բավական պահանջկոտ է, գերադասում է հատակապես հզոր հողեր, ծանր կավային, կրային և թաքիրային հողերում նա աճում է շատ թույլ և շուտով շարքից դուրս է գալիս։ Սակայն այն հողամասերում, որտեղ հողն ավելի հզոր է և ջրաթափանց, խնձորենին ընդհանուր առմամբ ուժեղ աճման և զարգացման է հասնում։ Միջին հասակի ծառերը 17—20 տարեկան, ունենում են 6—9 մ բարձրություն, 9—10 մ տրամագիծ և բավական սաղարթախիտ պսակ։

Խնձորենին դիմանում է ուժեղ սառնամանիքներին։ Համաչափ ձմեռվա պայմաններում 1949—1950 թթ. առանց վնասվելու դիմացել է —31,5°-ին, ծաղիկները դիմանում են մինչև —4°-ին։ Խնձորենու վեգետացիան սկսվում է մյուս պտղատու կուլտուրաներից (հոնենի, պնդուկենի, նշենի, ծիրանենի, սալորենի, դեղձենի, տանձենի) ավելի ուշ 18/III—22/III, նայած օդի ջերմաստիճանին։ Առանձին սորտերի մոտ «վեգետացիայի սկիզբը» ֆազի սկսման ժամկետների միջև աչքի ընկնող տարբերություն չի նկատվում, վեգետացիայի սկզբից մինչև ծաղկումը տևում է 19—27 օր, որի համար պահանջվում է 235,8—270,1° կամ 100—145,7° էֆեկտիվ ջերմություն (5° ակտիվ ջերմության հաշվով), (տես աղյուսակներ 1 և 2)։

Խնձորենին իր վեգետացիան ավարտում է 1/X—28/XI, որի հետևանքով հաճախ ձմեռային սորտերից շատերը ծածկվում են ձյունով առանց լրիվ տերևաթափի։ Վեգետացիան շրջանի տևողությունը 197—286 օր է, որի ընթացքում օրվա միջին ջերմաստիճանների գումարը կազմում է 3818—4313°, էֆեկտիվ ջերմաստիճանների գումարը՝ 3002—3183°։

Ծաղկումը Հոկտեմբերյանում տեղի է ունենում ապրիլի երկրորդ կեսին։ Ծաղկման տևողությունը ըստ տարիների տատանվում է 8—15 օրվա սահմաններում։ Սկզբնական ծաղկումը մասսայականի է փոխանցվում աստիճանաբար՝ 2—4 օրում, նայած օդի ջերմաստիճանին։ Մեր կատարած դիտողություններից պարզվել է, որ ծաղկման փուլը անցնելու համար խնձորենին պահանջում է 385—406° ջերմություն կամ 190—335° էֆեկտիվ ջերմություն։

1951 թվականին խնձորենու զանազան սորտերի ծաղկումն սկսվել է 14/IV—19/IV, օդի միջին ջերմաստիճանն այդ օրերին եղել է 15,3°, ծաղկման տևողությունն ըստ սորտերի՝ 8—15 օր 14/IV—28/IV։ Օրվա միջին ջերմաստիճանների գումարը այդ օրերի ընթացքում եղել է 155,5—171,5°, էֆեկտիվ ջերմաստիճանների գումարը՝ 95,5—100,6°։

1952 թվականին ծաղկումն սկսվել է 15/IV—25/IV, օդի միջին ջերմաստիճանը այդ օրերին եղել է 15,6°, ծաղկումը տևել է 8—20 օր, այդ շրջանում ջերմաստիճանն իջնելու պատճառով (—4,1°)։ Օրվա միջին ջերմաստիճանների գումարը ծաղկման ընթացքում եղել է 150,4—160,7°, էֆեկտիվ ջերմաստիճանների գումարը՝ 84,3—95,7°։

1953 թվականին ծաղկումն սկսվել է 19/IV, օդի միջին ջերմաստիճանը այդ օրերին եղել է 15,7, ծաղկման տևողությունը՝ 10—14 օր, 19/IV—1/V։

Աղյուսակ 1

Հոկտեմբերյանում խնձորենու նկատմամբ կատարված ֆենոլոգիական դիտողությունները (միջին տվյալներ 1951—1953 թթ.)

Դիտողության տարին	Տերևաբողբոջների բացվելը		Ծաղկաբողբոջների բացվելը		Ծաղկումը			Պտուղների հավաքը (հասունացումը)		Տերևաթափ	
	սկիզբը	մասսայական	սկիզբը	մասսայական	սկիզբը	մասսայական	վերջը	սկիզբը	մասսայական	սկիզբը	մասսայական
1951	20/III—29/III	2/IV—6/IV	7/IV—10/IV	11/IV—13/IV	14/IV—19/IV	21/IV—28/IV	28/IV—30/IV	1/VII—1/IX	15/VII—15/IX	10/X—20/X	10/XI
1952	18/III—25/III	26/III—4/IV	5/IV—7/IV	8/IV—13/IV	15/IV—20/IV	20/IV—2/V	25/IV—5/V	5/VII—1/IX	15/VII—1/X	15/X—30/X	28/XI
1953	19/III—28/III	1/IV—8/IV	10/IV—13/IV	14/IV—16/IV	19/IV—30/IV	25/IV—30/IV	26/IV—1/V	3/VII—10/IX	17/VII—25/IX	25/X—5/XI	24/XI

Աղյուսակ 2

Հոկտեմբերյանում խնձորենու սորտերի զարգացման փուլերն սկսելու համար անհրաժեշտ ջերմաստիճանների գումարը (0°-ից բարձր)

Դիտողության տարին	Սորտերի խմբավորումը ըստ հասունացման ժամկետների	Գարնանը վեգետացիայի սկզբից մինչև մասսայական ծաղկումը			Վեգետացիայի սկզբից մինչև պտուղների մասսայական հասունացումը			Վեգետացիայի սկզբից մինչև տերևաթափը		
		ջերմաստիճանների գումարը	էֆեկտիվ ջերմաստիճան. գումարը	օրերի քանակը	ջերմաստիճանների գումարը	էֆեկտիվ ջերմաստիճան. գումարը	օրերի քանակը	ջերմաստիճանների գումարը	էֆեկտիվ ջերմաստիճան. գումարը	օրերի քանակը
1951	Վաղահաս սորտեր . . .	390,5°	195,5°	38	1850,2°	1450,2°	111	3818,6°	3002,3°	196
1951	Ուշահաս սորտեր	403,3°	200,6°	43	3684,5°	2672,8°	171	4034,6°	3183°,0	255
1952	Վաղահաս սորտեր . . .	385,4°	186,2°	40	1874,3°	1223,7°	109	3952,6°	2987,6	193
1952	Ուշահաս սորտեր	430,8°	232,8°	38	3477,4°	2604,4°	170	4310,1	3134,4	250
1953	Վաղահաս սորտեր . . .	358,8°	207,3°	35	1956,4°	1415,4°	108	4100,5	3325,5	193
1953	Ուշահաս սորտեր	443,9°	274,2°	38	3490,5°	2645,8°	171	4310,1	3134,4	249

Օրվա միջին ջերմաստիճանների գումարը այդ ժամանակամիջոցում եղել է 112,6—129,3, էֆեկտիվ ջերմաստիճանների գումարը՝ 82,6—95,5°։

Ըստ ծաղկման ժամկետների մեր ուսումնասիրած սորտերը կարելի է բաժանել հետևյալ խմբավորումներին (տես աղյուսակ 1)։

1. Վաղ ծաղկող սորտերը, որոնց ծաղկումն սկսվում է 14/IV—19/IV։ Այս խմբի մեջ մտնում են՝ Բյուրա-Ջաֆար, Ղարանֆիլ Ալմա և Բելֆլյոր ժոլտի սորտերը։

2. Միջին ժամկետում ծաղկող սորտեր, որոնց ծաղկումն սկսվում է 20/IV—25/IV։ Այս խմբի մեջ մտնում են՝ ռենետ Լանդսբերգի, ռենետ Կասսելսկի, Անտոնովկա, Զելինի, ռենետ Սիմիրենկո, Վիրգինիա ռոզովայա, Պապիրովկա և Ապորտ սորտերը։

3. Ուշ ծաղկող սորտերին են պատկանում՝ Սարի Սինապը. Սույսլեպսկին, Պարմեն Զիմնի զոլոտոյը, Զիմնի բանանը, Պեպին լոնդոնսկին, որոնց ծաղկումն սկսվում է 26/IV—28/IV։

Ինչպես ցույց են տալիս վերը բերված տվյալները, վաղ և ուշ ծաղկող սորտերի միջև տարբերությունը կազմում է 10—15 օր (14/IV—28/IV)։ Այս հանգամանքն անպայման պետք է հաշվի առնել տնկման ժամանակ՝ տարբեր սորտերի փոշոտումն ապահովելու համար։

Խնձորենու աճը Հոկտեմբերյանում սկսվում է 22/IV—24/IV և ըստ սորտերի առանձնապես տարբերություն չի նկատվում։ Վեգետացիոն շրջանի երկարատևության և վեգետացիայի ընթացքում եղած բարձր ջերմաստիճանների շնորհիվ խնձորենին հաճախ տալիս է 2-րդ աճ, սկսած (20/VII—30/VII), իսկ որոշ սորտեր նույնիսկ 3-րդ աճ (Բելֆլյոր ժոլտի, 25/VIII)։

Հոկտեմբերյանում խնձորի հասունացման շրջանը, Հայաստանի մյուս շրջանների համեմատությամբ, ավելի կարճատև է և սկսվում է շուտ, ծաղկումից մինչև հասունացումը տևում է 2,5—4,5 ամիս, մինչդեռ մյուս շրջաններում տևում է 3,5—5,0 ամիս։

Հոկտեմբերյանում վաղահաս սորտերը (Խորաշավկա ալայա, Վիրգինիա ռոզովայա, Պապիրովկա, Ռեպկա Կոպիլովա, Սույսլեպսկի) սկսում են հասունանալ հուլիսի 1-ից մինչև օգոստոսի սկզբները։

Միջահաս սորտերը (Անտոնովկա, Զելինի, Ապորտ) հասունանում են օգոստոս ամսին (1/VIII—30/VIII)։

Միջա-ուշահաս սորտերի (Պարմեն Զիմնի զոլոտոյ, Ռենետ Լանդսբերգի, Պեպին լոնդոնսկի) հասունացումն սկսվում է սեպտեմբերի սկզբներից և տևում մինչև նոյեմբերի վերջը։

Ուշահաս սորտերի (Ռենետ Կասսելսկի, Բյուրա-Ջաֆար, Ղարանֆիլ Ալմա, Զիմնի բանան, Ռենետ Սիմիրենկո, Սարի Սինապ, Բելֆլյոր ժոլտի) հասունանում են պահպանարաններում, որտեղ նրանցից շատերը, ինչպես, օրինակ՝ Սարի Սինապը և Ռենետ Սիմիրենկոն պահվում են մինչև մայիսի կեսերը։ Խնձորի տարբեր սորտերի հասունացումը Հոկտեմբերյանում սկըսվում է մոտ մեկ ամիս ավելի շուտ, քան հյուսիսային շրջաններում, որի հետևանքով նվազում է նրանց պահունակությունը։ Այսպես, օրինակ, Անտոնովկան ընդհանրապես համարվում է ձմեռային սորտ, սակայն Հոկտեմբերյանում նա ուշ ամառային է և բոլորովին պահունակ չէ։ Չնայած այդ հանգամանքին, սորտերի ճիշտ ընտրության միջոցով հնարավոր է Արարատյան հարթավայրի շրջաններում բնակչությանը և կոնսերվի գործա-

բանին 10 տմխ անընդհատ մատակարարել խնձորի թարմ և բարձրորակ պտուղներ։

Պտուղների կազմակերպումից մինչև բերքահավաքը, ըստ սորտերի, տևում է 73—132 օր, որի ընթացքում պահանջվում է 1459—3177° ջերմություն կամ 1254—2472° էֆեկտիվ ջերմություն։

Աղյուսակ 3

Խնձորենու սորտերի բերքատվությունը Հոկտեմբերյանում 1951—1953 թթ.

Սորտի անունը	Հաշվառման ծառերի քանակը	Բերքի քանակը կիլոգրամներով								
		1951 թ.		1952 թ.		1953 թ.		1951—53 թթ.		1951—53 թթ.
		միջին	բարձր	միջին	բարձր	միջին	բարձր	միջին	բարձր	միջին բերքի գումարը
Ջյալբա-Ջաֆար	15	220	680	350	540	275	980	281	733	845
Ղարանֆիլ ալմա	10	200	740	255	700	300	830	251	756	755
Ջելինի	20	170	320	190	300	240	465	200	361	600
Բելֆլյոր ժոլտի	25	120	380	170	275	200	390	163	348	490
Ռենետ Կասուլսկի	25	230	430	0	0	200	370	143	266	430
Ռենետ Օրլեանսկի	20	180	250	20	50	100	290	100	196	300
Վիրգինկա սոդովայա	5	120	280	30	60	140	220	96	186	290
Ապորտ	14	80	320	120	467	75	300	93	362	275
Անտոնովկա	15	130	320	95	225	200	320	141	288	255
Պարմեն Զիմնի զոլոտոյ	15	90	165	30	75	80	220	66	153	250
Ռենետ Լանդսբերգի	12	150	340	0	0	100	275	83	203	250
Զիմնի բանան	8	61	180	100	260	85	255	82	231	246
Կալվիլ կրասնի	5	85	174	35	220	110	235	76	209	230
Գնպին Լոնդոնսկի	10	87	145	25	80	125	210	79	145	237
Ռեպկա Կոպիլովա	15	30	180	80	300	85	275	65	251	195
Ռենետ Կանադսկի	3	64	215	80	175	45	124	63	171	185
Բոգոդոսկի կրասավեց	10	25	86	120	245	40	85	61	105	185
Բոյկեն	10	75	170	80	155	30	80	61	135	185
Խորոշավկա ալայա	3	0	0	110	195	75	140	61	111	185
Սարի Սինապ	15	60	170	0	0	120	300	60	163	180
Ռենետ Սիմիրենկո	10	65	95	30	65	80	215	58	125	175
Սուլյլեպսկի	4	60	165	20	60	80	170	53	131	160
Ժոլտոյե բլագորոդնոյե	3	76	120	0	0	48	70	41	63	124
Պապիրովկա	4	0	0	60	180	40	125	33	102	100
Ռենետ Անանասնի	3	60	80	0	0	25	74	28	51	85

Խնձորենին պտղաբերում է մանր, բազմամյա շվերի, պտղաշվերի վրա, որոնք հիմնականում կենտրոնացած են լինում 3-րդ, 4-րդ, նույնիսկ 6-րդ կարգի ճյուղերի 2—5 տարեկան բնափայտի վրա։ Պտղաշվերի երկարակեցությունը 5—12 տարի է, նայած նրանց տիպին (պարզ և բարդ օղանիստեր, ընձյուղներ)։ Հոկտեմբերյանի պայմաններում լիակատար պտղաբերության շրջանում (17—19 տ.), նայած սորտին, մեկ ծառի բերքը սովորաբար 175—600 կգ է (տես աղյուսակներ 3 և 4)։ Բերքի հաշվառումը 3 տարվա ընթացքում կատարվել է Հոկտեմբերյանում Հայկոնսերվտրեստի Միկոյանի և Վորոշիլովի անվան սովխոզներում, յուրաքանչյուր սորտից 10—25 ծառի վրա, եղած բերքի և օգտակար թափուկի կշռման միջոցով։

Ըստ բերքատվության, մեր կողմից փորձարկվող սորտերը կարելի է բաժանել հետևյալ խմբավորումների՝

1. Ցածր բերքատու սորտեր, որոնց մեկ ծառի բերքատվությունը հասնում է 75—150 կգ-ի։ Այս խմբի մեջ մտնում են Ռենետ Սիմիրենկոն, Պապիրովկան, Սույսլեպսկին, Խորոշավկա ալայան, Բոյկենը։

2. Միջակ բերքատու սորտեր, որոնց բերքատվությունը հասնում է 150—250 կգ-ի։ Այս խմբի մեջ մտնում են՝ Ջիմնի բանան, Պեպին Լոնդոնսկի, Վիրգինկա ռոզովայա, Ռենետ Օռլեանսկի, Պարմեն Ջիմնի զոլոտոյ և Սարի Սինապ սորտերը։

3. Բերքատու սորտեր, որոնց բերքատվությունը 250—300 կգ է։ Այս խմբի մեջ մտնում են՝ Բելֆլյոր ժոլտի, Ջելլնի, Ռենետ Կասսելսկի, Անտոնովկա, Ռենետ Լանդսբերգի և Ռեպկա Կալիլովա սորտերը։

4. Ուժեղ բերքատու սորտեր են համարվում Բոլլու-Ջաֆարը և Ղարանֆիլ ալման, որոնց բերքատվությունը հասնում է 350—600 կգ-ի, իսկ առանձին ծառերի մոտ՝ մինչև 980 կգ-ի։

Բացի բերքի քանակից, մեծ նշանակություն ունի նաև պտղաբերման պարբերականությունը, որը հնդավորների մոտ, հատկապես կորիզավորների, խիստ կերպով է արտահայտված։ Հոկտեմբերյանի շրջանում երկար վեգետացիոն շրջանի և արևի առատ ջերմության պատճառով, խնձորենու սորտերից շատերը բոլորովին կորցրել են պտղաբերման պարբերականությունը, ինչպես, օրինակ՝ Ջելլնին, Բելֆլյոր ժոլտին, Պարմեն Ջիմնի զոլոտոյը։

Կան սորտեր, որոնց մոտ պարբերականությունը թույլ է արտահայտված. այդպիսիք են՝ Պեպին Լոնդոնսկին, Բոյկենը, Ռենետ Օռլեանսկին։ Այս սորտերը 2—3 տարի բերք տալուց հետո միայն մեկ տարի հանգստանում են։

Բյոլլու-Ջաֆար և Ղարանֆիլ ալմա սորտերի պտղաբերման պարբերականությունը կարգավորվում է սաղարթի ներսում։ Մի տարի պտղաբերում են ծառի 1—2 կմախքային ճյուղերը, հաջորդ տարին մյուս ճյուղերը, 3-րդ տարին պտղաբերում է ամբողջ ծառը, երբեմն նույնիսկ 1 տարեկան շվերը, 4-րդ տարին ծառը հանգստանում է։ Պտղաբերման պարբերականությունը համեմատաբար ուժեղ է արտահայտված Ռենետ Կասսելսկի, ռենետ Լանդսբերգի, Սարի Սինապ և Ռեպկա Կալիլովա սորտերի մոտ։

Տարբեր սորտերի բիոլոգիային ավելի լրիվ ծանոթանալու համար, մենք ուսումնասիրել ենք խնձորենու 18 սորտերի պտղաբերման պարբերականությունը։ Սաղարթի ներսում ընտրելով 1-ական կմախքային ճյուղ,

Աղյուսակ 4

Հոկտեմբերյանի շրջանում խնձորի սորտերի բերքի քանակը մեկ ծառից 1951—1953 թթ.

Սորտի անունը	Բերքի քանակը կգ 1951 թ.	Բերքի քանակը կգ 1952 թ.	Բերքի քանակը կգ 1953 թ.	Բերքի քանակը կգ 1951—53 թթ.
Ղարանֆիլ ալմա	320	100	640	1060
Քյալբա-Զաֆար	380	65	587	1032
Բելֆլյոր ժոլտի	285	467	276	1028
Զելենի	214	120	467	801
Ռենետ Կասելսկի	420	0	376	796
Անտոնովկա	320	50	345	715
Ռեպկա Կոպիլովա	320	0	275	595
Զիմնի բանան	224	61	295	580
Բոյկեն	220	73	210	503
Բոսկոպսկի կրասավեց	64	320	85	469
Ապորտ	0	80	310	390
Կալվիլ կրասնի օ.	0	310	65	375
Ռենետ Լանդսբերգի	0	320	20	340
Գեպին Լոնդոնսկի	125	0	280	333
Ռենետ Կանադսկի	188	0	100	288
Գարմեն Զիմնի զոլոտոյ	125	47	110	282
Ռենետ Սիմիրենկո	64	92	117	273
Սույսլեպսկի	59	110	88	257
Գապիբովկա	28	47	181	256
Խորոշավկա ալայա	59	82	100	251
Սարի Սինապ	85	9	145	230
Ռենետ Օրլեանսկի	86	18	120	224
Վիրգինկա սոդովայա	85	12	120	217
Ժոլտոյե բլագորոդնոյե	53	0	109	162
Ռենետ Անանասնի	21	0	68	89

յուրաքանչյուր սորտից երեքական ծառի վրա, և երեք տարի շարունակ հետևել ենք այդ ճյուղերի վրա գտնվող բոլոր պտղաշվերի պտղարերմանը՝ (տես աղյուսակ 5)։

Դիտողությունները ցույց են տվել, որ կան սորտեր, ինչպես, օրինակ՝ Բելֆլյոր ժոլտին, Զելենին, Անտոնովկան, որոնք իրենց պտղարերման

Աղյուսակ 5

Պոդաշվերի պտղաբերության պարբերականությունը խնձորենու տարբեր սորտերի մոտ %-ներով

Սորտի անունը	1951 թ.			1952 թ.			1953 թ.		
	Մեկնաբանությամբ	Մեկնաբանությամբ	Մեկնաբանությամբ	Մեկնաբանությամբ	Մեկնաբանությամբ	Մեկնաբանությամբ	Մեկնաբանությամբ	Մեկնաբանությամբ	Մեկնաբանությամբ
		ներկայացված	չներկայացված		ներկայացված	չներկայացված		ներկայացված	չներկայացված
Ջյալրա-Ջաֆար	89,5	74,3	25,7	11,6	9,3	90,7	99,1	91,0	9,0
Ռենետ Լանդսբերգի	18,5	18,0	82,0	88,9	85,7	14,3	11,1	9,5	90,5
Ռենետ Կասսելսկի	97,1	69,6	30,4	5,4	3,8	96,2	75,3	74,1	25,9
Անտոնովկա	98,2	85,1	14,9	31,2	25,2	4,8	87,6	78,7	21,3
Բելֆլյոր ժոլտի	59,7	58,1	41,9	98,1	90,0	10,0	95,4	87,1	12,9
Ռենետ Սիմիրենկո	85,1	76,7	23,3	76,1	70,7	29,3	64,1	59,7	40,3
Սուլյեպսկի	97,4	81,0	19,0	11,1	10,0	90,0	87,1	85,8	14,2
Զելինի	85,1	73,4	26,6	64,1	59,2	40,8	97,8	95,1	4,9
Վիրգինկա սոզովայա	45,1	44,2	55,8	88,1	70,4	29,6	15,8	14,3	85,7
Ռենետ Օրլեանսկի	81,0	73,5	24,5	8,1	7,7	96,3	81,4	72,6	27,6
Բոյկեն	41,3	38,9	61,1	71,4	60,7	39,3	87,1	78,4	21,6
Զիմնի բանան	81,3	78,1	21,9	50,7	45,1	54,9	91,2	88,4	11,6
Ղարանֆիլ ալմա	97,1	72,4	27,6	62,0	55,6	44,4	91,0	85,2	14,8
Ապորա	91,4	76,5	23,5	31,2	29,0	71,0	72,0	61,4	38,6
Պեպին Լոնդոնսկի	30,5	15,2	84,8	71,2	69,5	30,5	87,5	86,1	13,9
Խորոշավկա ալայա	21,2	19,5	8,5	89,3	80,7	19,3	61,2	54,1	45,9
Սարի Սինապ	61,2	60,9	39,1	0	0	0	97,2	96,8	7,2
Ռեպկա Կոպիլովա	81,2	74,5	25,5	25,3	21,4	78,6	71,2	70,4	29,6

պարբերականությունը կանոնավորում են տաղաբիի ներսում և ամեն տարի պտղաբերում են։ Վերոհիշյալ սորտերի մոտ պտղաշվերը պտղաբերում են հաջորդաբար։ Մի տարի պտղաբերում է պտղաշվերի մի մասը, հաջորդ տարին մյուս մասը և այսպես շարունակ։ Որոշ սորտերի մոտ մի տարի ծաղը ուժեղ բերք է տալիս, որի ժամանակ պտղաբերում են պտղաշվերի ավելի քան 90%-ը, մյուս տարին այդ ծաղի վրա համարյա բերք չի կազմակերպվում։ Այդպիսի սորտերին են պատկանում Ռենետ Կասսելսկին, Ռենետ Լանդսբերգը, Սարի Սինապը։ Նման սորտերի համար անհրաժեշտ է մշակել այնպիսի ագրոտեխնիկական միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մինիմումի հասցնել պարբերականությունը։

Եզրակացություն.—*Հոկտեմբերյանի շրջանի կլիմայական պայմանները համապատասխանում են խնձորենու նորմալ աճմանն ու զարգացմանը։*

Դեղեցիկ, խոշոր, բարձրորակ պտուղների առկայությունը, սորտերից մեծ մասի մոտ համեմատաբար թույլ արտահայտված պտղաբերության

պարբերականությունը և բարձր բերքատվությունը վկայում են այս շրջանում խնձորենու կուլտուրայի հետագա զարգացման հնարավորության մասին։

Ինչ վերաբերում է խնձորենու կուլտուրայի վրա բացասական ազդեցություն ունեցող հողային ու կլիմայական մի քանի գործոններին, ինչպիսիք են՝ ուժեղ քամիները, օդի չորությունը, վաղ աշնանային ցրտահարությունները, ջերմաստիճանի ուժեղ տատանումները, թթքիրային և կարբոնատային հողերի առկայությունը, ապա բարձր ագրոտեխնիկական միջոցառումների կիրառումով միանգամայն հնարավոր է վերացնել նշված գործոնների բացասական ազդեցությունը։

Հայկական ՍՍՌ ԳԱ
Պտղաբուծական ինստիտուտ։

Ստացվել է 6 V 1955 թ.։

Р. В. Григорян

Некоторые данные по биологии яблони в условиях Октемберянского района

Резюме

Наличие красивых, крупных, высококачественных плодов, высокая урожайность большинства сортов яблонь свидетельствуют о необходимости дальнейшего развития этой культуры в условиях Октемберянского района. Что касается влияния некоторых климатических и почвенных факторов, как, например, сильных ветров, сухости воздуха, резких колебаний температуры, наличия такиристых и карбонатных почв, то при применении высокой дифференцированной агротехники вполне возможно ликвидировать отрицательное действие вышеуказанных факторов и обеспечить получение высоких урожаев яблонь.